

պէն դուրս գտնուած աւագանին, ամբողջ հովտին և իր նշանաւոր աղբիւրին՝ Այն Սիրքի Մարիամ, որ կը կոչուի նաև Այն իւնեհ Տարաւ (Սանդուղներու Մօր աղբիւրը): Անոր աստուածաշնչական անունն է Ա՛յն Ռոժեղ, որ կը նշարակէ Աղբիւր Լրտեսին և կը բղխի խորունկ ժայռէ մը: Աւանդաբար կը պատմուի թէ Ս. Կոյսը միշտ այս աղբիւրը կու գար լուալու իր կամ որդւոյն հանդերձիկները: Հոն կը գտնուին շէնքի հիմեր, որով կը կարծուի թէ ի հնուին հոն եկեղեցի մը շինուած էր (Հան. էջ 254): Սակայն ուրիշ աւանդութեան մը համաձայն, երբ Ս. Կոյսը Յիսուս մանուկը տաճար ընծայելու զնաց, ժամանակ մը Սիմէոն Ծերունիին տունը մնաց: Այս միջոցին նոյն աղբիւրին մէջ ան լուալու կուգար աստուածային մանկան խանձարուքը (Ham. Ա. հատ. էջ 407):

17. Սելովամի աւագանը. — Սելովամի աւագանը(\*) նշանաւոր եղած է ա՛յն հրաշքով զոր մեր Տէրը

**Նս. Ե. 8,** (էլիմ «ասուածներ» **Յլբ. ԺԵ, 27, Թիւբ. ԼԳ. 9-10),**  
**Ա՛յն Շէմս,** աղբիւր արեգական (**Յես. ԺԵ. 7**):

Այս հաւաստիքը ընդհանուր է. քրիստոնէայ սուրբերու կողմէ բրնակուած ջրհորներն ու աղբիւրներն են Պիր օմահ (Պէյք ձալա) ուր կը բնակէր Ս. Կոյս Մարիամ. **Այն Քեարիմ,** դարձեալ Սուրբ Կոյսը. **Այն Կիպրիան,** Ս. Կիպրիանոս (Պէյք ձալայի եւ Ս. Գէորգի միջեւ): Այս աղբիւրներէն մի քանիսն հրաւր ցոյց կուտան զանոնք պահպանող սուրբին տօնախմբութեան օրը. այս կերպով Պիր Օմահի ջուրը կ'առասանայ եւ վեր կ'ելլէ Ս. Կուսի օրը (Սեպտ. 8) եւ ջրհորին բերանի քարերը կարմիր կը ներկուին (Յ. Ք. Օ. Բ. հատ. էջ 8-9):

(\*) «Ե՛րբ լուա՛ յաւագանին Սելովամայ որ քարզանի առաւելաւ». Աստուած հրաւր գործեց Սելովամի մէջ իբր շնորհ Եսայի մարգարէին, որ մեռնելէ առաջ նուազման մէջ ըլլալով՝ խմելու ջուր ու-